ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
REPUBLIC OF ARMENIA
SECRETARY GENERAL OF MINISTRY OF ENVIRONMENT
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ГЕНЕРАЛЬНЫЙ СЕКРЕТАРЬ МИНИСТЕРСТВА ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ

№ 5/06.2.3/284

«13» «01» 2025

«Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Գևորգ Եսայանին

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

«Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն 2024 թվականի դեկտեմբերի 26-ի գրությամբ հրաժարվել է շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ Գնորդ) և «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2024 թվականի դեկտեմբերի 18-ին կնքված «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/26-2» ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 10-րդ (13 հատ «օճառի տարա») և 19-րդ (13 հատ «զուգարանի թղթի բռնակ») չափաբաժիններով նախատեսված ապրանքների (այսուհետ՝ Ապրանքներ) մատակարարումից:

Համաձայն Պայմանագրի 1.1 կետի՝ Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի №1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Համաձայն Պայմանագրի 2.4.1 կետի՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Հաշվի առնելով, որ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից խախտվել է Պայմանագրով սահմանված պարտավորությունները և հիմք ընդունելով Պայմանագրի 8.9 կետը՝ Գնորդը մասնակի միակողմանի լուծում է պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Պայմանագրի մասնակի միակողմանի լուծման արդյունքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում պայմանագրի կատարման ապահովման գումարը, ինչը կազմում է 13000 (տասներեք հազար) ՀՀ դրամ, անհրաժեշտ է վճարել ֆինանսների նախարարության 900005000758 հաշվեհամարին, իսկ որակավորման ապահովման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
0010, ք.Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
3 Government Bld., Republic Sq., Yerevan, Armenia, 0010
0010, Армения, г.Ереван, Пл. Республики, Дом Правительства 3
10010608@e-citizen.am | minenv@env.am | www.env.am
+374 11 818 520 | +374 11 818 506

գումարը՝ 156000 (մեկ հարյուր հիսունվեց հազար) ՀՀ դրամը, վճարել ֆինանսների նախարարության 900008000664 հաշվեհամարին, ինչպես նաև Պայմանագրի 6.3 կետով նախատեսված և հաշվարկված տուգանքը, ինչը կազմում է 2949 (երկու հազար ինը հարյուր քառասունինը) դրամ, անհրաժեշտ է վճարել ֆինանսների նախարարության 900005000758 հաշվեհամարին և շրջակա միջավայրի նախարարությանը ծանուցել վճարման անդորրագրերի պատճենները կամ դրանք տրամադրել gnumner@env.am էլեկտրոնային փոստի հասցեով:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում՝ պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

ա) լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման վերը նշված գումարները, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

- բ) մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

1/13/2025

X

ՍԵՐԳՈ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Signed by: ATANESYAN SERGO 4007880425 Սերգո Աթանեսյան

Ֆինանսատնտեսական վարչության
Ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժին
Լիլիթ Զոհրաբյան 011 818 529